

ԳԱԶԱՀԱՇՎԻՉԻ ՍՏՈՒԳԱԶԱՓՈՒՄ

ՀՀ-ում բնակչության կողմից սպառվող կենցաղային գազի հաշվառումն իրականացվում է սլովակյան, ֆրանսիական և ռուսական արտադրության գազահաշվիչներով:

Չափազիտության ազգային մարմնի կողմից ընդունված կարգի համաձայն, կենցաղային հաշվիչների պարբերական ստուգաչափումը պետք է կատարվի 5 տարին մեկ:

Հաշվի առնելով, որ կենցաղային գազահաշվիչները հանդիսանում են մատակարարի՝ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի սեփականությունը, դրանց ալանային ստուգաչափման հետ կապված բոլոր ծախսերը կատարվում է «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ հաշվին:

Ըստ Գազի մատակարարման և օգտագործման կանոնների, մատակարարն ոչ ուշ, քան 3 աշխատանքային օր առաջ բնակչին է տեղեկացնում առևտրային հաշվառքի սարքի ապահավաքակցման, հերթական կամ արտահերթ ստուգաչափման ժամկետների մասին, որից հետո բնակչի հաշվիչը հանվում և փոխարինվում է այլ հաշվիչով՝ գազամատակարարման նորմալ ընթացքը:

Մատակարարն իրավունք ունի առևտրային հաշվառքի սարքը ապահավաքակցել առանց բաժանորդին նախապես ծանուցելու, եթե ակնհայտորեն հայտնաբերել է, որ բաժանորդը բնական գազը սպառում է առևտրային հաշվառքի սարքի խախտմամբ:

Կատարված գործողության վերաբերյալ կազմվում է հանման երկկողմ ակտ՝ տեղեկություններ նշելով հաշվիչի ամբողջականության մասին: Գազահաշվիչին միտումնավոր միջամտությունների հայտնաբերման դեպքում նրանց վերանորոգման հետ կապված ծախսերը կատարում է մեղավոր կողմը:

Գազահաշվիչները կարող են ենթարկվել նաև արտապլանային ստուգաչափման, եթե մատակարարի և բաժանորդի մոտ առաջանում է կասկածներ հաշվիչի աշխատանքի վերաբերյալ:

Այս դեպքում ծախսերը կատարվում է համաձայն ԳՄՕԿ-ի 4.8 կետի:

Գազահաշվիչների նախնական և վերջնական ստուգաչափմանը հնարավորություն ունի մասնակցելու նաև բնակիչը, եթե հանման ակտում կատարված է համապատասխան նշում: